

հանապազ, թե *Որ հաւատայ յիս՝ զգործն զոր ես գործեմ՝ եւ՝ նա գործեսցէ, եւ առաւել եւս գործեսցէ՜*^ա:

4 Եւ կատարեալ դահճացն զգործն ըստ հրամանին Վեհդենշապիոյ՝ խաղացուցանել այնուհետեւ ի շահաստանէն² զսուրբսն փութային: 5 Եւ տեսեալ զայն նախարարացն Յայոց, որք անդէն ի դղեկի³ շահաստանին⁴ մնալոց էին ի կապանս՝ քաջալերեալք եւ ապաւինեալք ի յոյսն երկնաւոր, աներկիւղ համարձակութեամբ առաջի ամենայն բազմութեանն հրապարակին Պարսկաց, աստարացն եւ որք անդ էին ի շահաստանին, անկեալք յոտս սուրբ քահանայիցն Աստուծոյ՝ ինդալից եւ ուրախասիրտք համբուրէին յերկար ողջունիւ զոտս Նոցա, աղաչելով եւ ասելով, թե «յիշեսցի՛ք զմեզ անմոռաց յուրախութեանն ձերում եւ յարթայութեանն»: 6 Նոյնպէս եւ սուրբ քահանայքն Աստուծոյ բերկրեալք սրտիւք եւ զուարթալից երեսաւք ընկալեալ⁵ զամենեսեան ի գիրկս իւրեանց՝ ասէին. «Աստուած զաւրութեանց աւրինեսցէ զձեզ, եւ տացէ ձեզ տեւողութիւն համբերութեան⁶ ի փառս անուանն իւրոյ, եւ զաւրացուցէ զձեզ առաջի ազգացս հեթանոսականաց. եւ արձակեալ զմարմինս ձեր յերեւելի կապանացոյ յորում էքդ՝ առաջնորդեսցէ ձեզ յաշխարհն ծննդեան ձերոյ, եւ ի գիրս հարցն ձերոց հանգուցէ զոսկերս ձեր, եւ յաներեւոյթ կապանացն սատանայի⁷ արձակեալ զոգիս ձեր՝ ածցէ զձեզ ի գաւառն, ուր զմեզ յուղարկեցէք, եւ բնակեցուցէ զմեզ ձեաւք հանդերձ յաւիտենից յարկսն, ուր Քրիստոս է ընդ աջմէ Աստուծոյ⁸ Յաւր»:

7 Եւ տեսեալ անաւրինացն զայնպիսի⁹ ուրախալից հրաժեշտ ի միմեանց սուրբ քահանայիցն եւ նախարարացն Յայոց՝ այլապէս ընդ միտս իւրեանց ծաղրելով. հաշուէին զնոսա լինել անգետս հրամանի թագաւորին, եւ ասէին գաղտ ցմիմեանս. «Չի թէ գիտէին երիցանիս զմահն, զոր պատրաստեալ է Նոցա՝ ունէին արդեաւք բազում սատարս լալոյ զինքեանս, այլ այդպէս¹⁰ ծիծաղել եւ ուրախանալ ոչ լինէին կարող»: 8 Եւ զայն ոչ գիտէին ամբարիշտքն, եթէ Նոցա¹¹ այն էր ցնծութիւն եւ Նոյն լուր ուրախութեան, եւ

1 *ԲԳտ. չիք* եւ

ա Յովհ. ԺԴ 12

2 *ՁԱտ.* ի շահըստանէն

3 *ՁԱտ.* եւ որք անդ էին ի դղեկի

4 *ՏՏ.* եւ որք անդէն ի շահաստանին

5 *ՏՏ.* ընկալեալք

6 *ՏՏ. չիք* համբերութեան

7 *Ձ.* սատանայի կապանացն

8 *ՏՏ. չիք* Աստուծոյ

9 *ՏՏ.* այնպիսի

10 *Ատ.* այդպէս

11 *ՏՏ. չիք* Նոցա